

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ՆԱԻՐԱ ՊՈԴՈՍՅԱՆ

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ԴԱՄԱՎԱՆԴՈՒՄԸ
COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

ԵՊՀ-ՈՒՄ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՕՐԻՆԱԿԸ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023**

ՀՏԴ 378.016:811:004.77(07)

ԳՄԴ 74.48+16.263g7

Պ 797

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ արևելագիտության
ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. Ռուբեն Մելքոնյան

Գրախոսներ՝ պ.գ.թ., պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյան

Բ.գ.թ., դոցենտ Լուսինե Սահակյան

Պոդոսյան Նաիրա

Պ 797 Օտար լեզուների առցանց դասավանդումը COVID-19
համավարակի ընթացքում. ԵՊՀ-ում թուրքերենի դասըն-
թացի օրինակը, Եր., ԵՊՀ հրատ., 2023, 32 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված են ԵՊՀ արևելագիտու-
թյան ֆակուլտետում COVID-19 համավարակի ընթացքում թուրքերենի դասըն-
թացի կազմակերպման մեթոդական առանձնահատկությունները: Աշխատանքը
հասցեագրված է արևելագետներին, լեզվաբաններին ու ընթերցող լայն շրջանա-
կին:

ՀՏԴ 378.016:811:004.77(07)

ԳՄԴ 74.48+16.263g7

ISBN 978-5-8084-2590-3

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808425903>

© ԵՊՀ հրատ., 2023

© Պոդոսյան Ն., 2023

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՌՑԱՆՅ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ COVID-19
ՀԱՍԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ. ԵՊՀ-ՈՒՄ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՕՐԻՆԱԿԸ**

Համալսարանը վայր է, որտեղ մի սերունդը մյուս սերնդից գիտելիք է ստանում, և մեքենան անկարող է դա անել: Համակարգչի մեջ հնարավոր է գրանել տեղեկություն, բայց միայն մարդու մասնակցությամբ է գիտելիքը սերնդեսերունդ փոխանցվում:

The Daily Reveille քերթ, 1993 թ.¹

Օտար լեզուների իմացությունը գնահատվել և կարևորվել է դեռևս անհիշելի ժամանակներից: Միջազգային միգրացիոն տեղաշարժերի ակտիվացումն ու տեխնոլոգիական զարգացումն էլ ավելի արդիական դարձրեց մայրենի լեզվին զուգահեռ այլ լեզուների իմացությունը: Ընդ որում, ավանդաբար կարևորվող անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին մեր օրերում ավելանում են նաև չինարենը, ճապոներենը, արաբերենը:

Բնականաբար, կախված պետության աշխարհագրական դիրքից, տնտեսական ու մշակութային կապերի ակտիվությունից, կոնկրետ հասարակության համար արդիական լեզուների ցանկը փոփոխվում է:

Կայծակնային արագությամբ փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակում Հայաստանի Հանրապետության համար առավել քան կարևոր է թուրքերենին, ադրբեջաներենին, պարսկե-

¹ **Zimmerman J.**, Coronavirus and the Great Online-Learning Experiment. Let's determine what our students actually learn online, <https://www.chronicle.com/article/-coronavirus-and-the-great-online-learning-experiment> (մուտքի ամսաթիվ՝ 25.01.2021):

րենին, վրացերենին վարժ տիրապետող և համապատասխան երկրների պատմության, քաղաքականության, տնտեսության, մշակույթի մասին համալիր գիտելիքներ ունեցող մասնագետների պատրաստումը:

Հարկ է նշել, որ հարյուրամյակների ընթացքում գտնվելով տարբեր արևելյան կայսրությունների բախումների կիզակետում՝ հայերը, ժամանակի հրամայականներից ելնելով, սովորել են նրանց լեզուները: Ավելին, կրթության ու գիտության նկատմամբ հատուկ հոգածություն ունենալով՝ ժամանակի ընթացքում կարևոր ավանդ են ունեցել այդ լեզուների ուսումնասիրման և ուսուցման գործում: Հիշարժան է Հրաչյա Աճառյանի վկայությունն Օսմանյան կայսրությունում հայ գործիչների դասագրքաստեղծ ավանդի մասին. «Նույնիսկ տաճկերեն լեզվի համար առաջին եվրոպական ռճով ու նոր մեթոդով դասագրքերը հայերը պատրաստեցին: Այսպես՝ Միհրան Աբիկյանը, Ռեֆիկ հոջան, Մարայ-դարյանը և Ջեքի Կարապետյանը, որոնց պատրաստած դասագրքերը տաճկական դպրոցներում գործածության դրվեցին... Միհրան Աբիկյանը 50 անուն դասագիրք է գրել («Մութավվել սարֆի Օսման»)»²: Դակատագրի բերումով պատմական Հայաստանի տարածքից դուրս հայտնված հայերն են հիմնել արևելյան լեզուների ուսումնասիրման և առհասարակ համաշխարհային արևելագիտության զարգացման գործում կարևորագույն ներդրում ունեցող Մխիթարյանների միաբանությունը Վենետիկում և Վիեննայում, ինչպես նաև Լազարյան ճեմարանը՝ Մոսկվայում: Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում արևելյան լեզուների համալսարանական ուսուցումը սկսվել է 1919 թ.՝ Երևանի պետական համալսարանի հիմնումից կարճ ժամանակ անց: Իսկ 1940 թ. բանասիրական ֆակուլտետում բացվել է արևելյան բա-

² Սաֆարյան Ա., Գալոյան Ս., Հայ ուսանողներին թուրքերենի դասավանդման որոշ առանձնահատկությունների մասին, Արևելագիտության հարցեր, N 13, 416-435, էջ 417:

նասիրության ամբիոն, որի հիմքի վրա էլ 1968 թ. ստեղծվել է արևելագիտության ֆակուլտետը: Ի սկզբանե ֆակուլտետում են արևելքի պատմության և արևելյան բանասիրության ամբիոններ, որոնք հետագայում վերակազմավորվել են արաբագիտության, թուրքագիտության (2010 թվականից՝ թյուրքագիտության) և իրանագիտության ամբիոնների³: Ֆակուլտետի երեք ամբիոններում ավանդաբար ուսուցանվող արաբերենին, պարսկերենին և թուրքերենին զուգահեռ այսօր դասավանդվում են նաև եբրայերեն, թաթերեն, թալիշերեն, քրդերեն, ադրբեջաներեն և այլ արևելյան լեզուներ:

Պետք է նշել, որ չնայած արևելյան լեզուների դասավանդման հարուստ ավանդույթին՝ խորհրդային ժամանակաշրջանում ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում ուսուցումը կազմակերպվել է ռուսական դասագրքերով: Միայն Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո է զարկ տվել հայերեն դասագրքերի ստեղծմանը: Թյուրքագիտության ամբիոնում հրատարակվել են Թուրքիայի պատմության⁴ և թուրքական գրականության⁵ դասագրքեր, ինչպես նաև հայախոս ուսանողների լեզվամտածողության առանձնահատկությունները հաշվի առնող մեթոդաբանությանը թուրքերենի⁶, օսմաներենի⁷ և ադրբեջաներենի⁸ դասագրքեր: Լեզուների դասավանդման ժամանակակից մոտեցումներ-

³ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի մասին մանրամասն տե՛ս <http://www.ysu.am/faculties/hy/Oriental-Studies/section/about> (մուտքի ամսաթիվ՝ 25.01.2021):

⁴ Սաֆրասյան Ռ., Մելքոնյան Ռ., Դումանյան Ա., Տեր-Մաթևոսյան Վ., Չաքրյան Հ., Հովհաննիսյան Ա., Գեղամյան Վ., Թուրքիայի Հանրապետության պատմություն. Բուխական դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2018:

⁵ Մելքոնյան Ռ., Թուրքական գրականության պատմություն (XX դարի 20-ական թթ. - XXI դարի սկիզբ), Դասագիրք, Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2017:

⁶ Սաֆարյան Ա., Մոզոմոնյան Ա., Լոբմազյոզյան Տ., Թուրքերենի դասագիրք, 7-րդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2021:

⁷ Սաֆարյան Ա., Սարգսյան Ա., Սահակյան Լ., Օսմաներենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:

⁸ Մովսիսյան Լ., Ադրբեջաներենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2012:

րին համահունչ գրված այս դասագրքերը դյուրացնում են ուսանողների համար լիովին անծանոթ, հայերենից տարբերվող կառուցվածքով լեզուների յուրացումը: Թուրքերենի դասընթացի շրջանակներում համադրելով ավանդական բառաքերականական ու առավել նորարական հաղորդակցական մեթոդները⁹, դասախոսները փորձում են ուսանողների մեջ հավասարապես զարգացնել կարդալու, գրելու, լսելու և խոսելու հմտությունները, պատրաստել աշխատաշուկայում մրցունակ մասնագետներ:

Սույն գրքույկը համեստ փորձ է ներկայացնել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բաժնում թուրքերենի առցանց դասընթացի կազմակերպման մեթոդական առանձնահատկությունները կորոնավիրուսային համավարակի ընթացքում: Մեր նպատակն է վերհանել թուրքերենի հեռավար դասավանդման դրական և բացասական կողմերը, գնահատել այս ձևաչափով կազմակերպված դասընթացի արդյունավետությունը¹⁰: Հետազոտությունը հիմնված է ԵՊՀ արևելագիտության ֆա-

⁹ Այս մեթոդների մասին առավել մանրամասն տե՛ս **Կուբանյան Ա.**, Օտար լեզուների դասավանդման խնդիրների շուրջ, էջ 30-41, <http://publications.ysu.am/wp-content/uploads/2020/01/Kubanyan-A..pdf> (մուտքի ամսաթիվ՝ 27.02.2022):

¹⁰ Կորոնավիրուսի համավարակի ընթացքում հայաստանյան կրթական համակարգի գործունեության արդյունավետության մասին իրականացվել են մի շարք հետազոտություններ, որոնք հիմնականում վերաբերում են դպրոցական կրթությանը: Տե՛ս, օրինակ, **Համավարակի պայմաններում կրթական քաղաքականության արդյունավետության գնահատման զեկույց**, 2021, <https://erit.am/documents/pdf/98b2f8f11b81657a85af29f6a02f05e0.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 18.01.2022), տե՛ս նաև **Գալստյան Մ.**, Հեռավար ուսուցումը Հայաստանում համավարակի ժամանակ. Դիսկուրս վերլուծություն, «Կրթությունը 21-րդ դարում» Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես Թիվ 2(6), Երևան, 2021, էջ 77-86, http://publications.ysu.am/wp-content/uploads/2021/12/Galstyan_Marina.pdf (մուտքի ամսաթիվ՝ 18.01.2022), տե՛ս նաև **Согоян С.**, Важность слияния традиционной и инновационной педагогики во время пандемии, «Կրթությունը 21-րդ դարում», Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես Թիվ 2(6), Երևան, 2021, էջ 173-179 http://publications.ysu.am/wp-content/uploads/2021/12/Soghoyan_Spartak.pdf (մուտքի ամսաթիվ՝ 18.01.2022): Բուհական համակարգում կրթության հեռավար կազմակերպման մասին տե՛ս **Tonikyan S., Hovsepian S.**, Challenges in Higher Education During Covid -19: The Example of Arabic Chair at

կուլտետի թյուրքագիտության ամբիոնի առաջին, երկրորդ և երրորդ կուրսերի, ինչպես նաև արաբագիտության և իրանագիտության ամբիոններում թուրքերենը որպես երկրորդ արևելյան լեզու սովորող շուրջ չորս տասնյակ ուսանողների հետ իրականացված առցանց հարցման արդյունքների բովանդակային և քանակական վերլուծության վրա քոնթենթ և դիսկուրս վերլուծության մեթոդաբանությամբ¹¹:

Yerevan State University, Journal of Oriental Studies, N 17, Yerevan, 2021, pp. 14-26:

¹¹ Ուսանողների և դասավանդողների առցանց հարցումների մեթոդաբանության մասին մանրամասն տե՛ս **Ustabuluti M. Y.**, The Self-Assessment of Lecturers Teaching Turkish as a Foreign Language Regarding Distance Education in the Covid-19 Pandemic Era https://ijpe.inased.org/makale_indir/2309 (մուտքի ամսաթիվ՝ 18.01.2022):

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ
ՊԸՅՄԱՆՆԵՐՈՒՄ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կորոնավիրուսային համավարակի հետևանքով կյանքի սովորական ռիթմի խաթարումը ստիպեց փնտրել և գտնել աշխատանքի, հանգստի և ի հարկե կրթության կազմակերպման նոր ճանապարհներ: Անշուշտ, թվայնացված աշխարհում տեսազանգերի, էլեկտրոնային փոստի, սոցիալական ցանցերի միջոցով հեռավորությունների հաղթահարումը արդեն ավելի քան մեկ տասնամյակ է, ինչ սովորական երևույթ է: Համավարակը մի կողմից նպաստեց վիրտուալ աշխարհում կենսագործունեության կազմակերպման մեթոդների զարգացմանը, մյուս կողմից ցույց տվեց, որ նույնիսկ ամենակատարյալ տեխնոլոգիաների առկայության պարագայում առցանց տիրույթը չի կարող լիովին իր վրա վերցնել մարդկանց սոցիալիզացիայի գործառույթը կամ փոխարինել կենդանի շփմանը: Միևնույն ժամանակ օնլայն աշխատելու հնարավորությունը դարձավ այն կարևոր գործիքը, որ կանխարգելեց տնտեսության մասնավոր և պետական սեկտորների լիակատար պարալիզացումը, թույլ տվեց անխափան գործել պետական, վարչական և, մասնավորապես, կրթական հաստատություններին:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՈ-ի հրապարակած տվյալների՝ 2020 թ. մայիս ամսվա դրությամբ ուսուցման տարբեր մակարդակներում ընդգրկված շուրջ 1.2 միլիարդ սովորող առկա ձևաչափով դասերի չէր մասնակցում¹²: Նրանց կրթության շարունակականությունն ապահովելու համար գրեթե բոլոր պետություններում տարատեսակ միջոցառումներ էին իրականացվում՝ ռադիոյով և հեռուստատեսությամբ դասընթացների հեռարձակումից մինչև էլեկտրոնային տարբեր հարթակներում հեռավար ուսուցման կազմակեր-

¹² Education in the Time of COVID-19, https://unesdoc.unesco.org/ark:/48223/ptf0000374075_eng (նուառնի ամսաթիվ՝ 17.02.2022):

պում: Այս մեթոդների արդյունավետությունը գնահատելիս ՅՈՒՆԵՍԿՈ-ի փորձագետները նշում են, որ հեռավար կրթության ռազմավարությունների և հատկապես սոցիալապես անապահով ուսանողների ներգրավման արդյունավետության վերաբերյալ տարբեր երկրների գնահատականներն արմատապես տարբերվում են իրարից,¹³ և որպես կանոն գործընթացը շատ ավելի արդյունավետ է եղել զարգացած երկրներում¹⁴: Սրա երկու հիմնական պատճառներն են այս երկրներում տեխնիկական միջոցների և ինտերնետի լայն հասանելիությունը, ինչպես նաև համավարակից առաջ էլ հեռավար կրթություն կազմակերպելու փորձառությունը:

Անշուշտ, համաշխարհային պրակտիկայում կրթական ծրագրերում առցանց բաղադրիչի օգտագործումը նորություն չէ: Արժի նշել, որ հեռավար ուսուցման արմատներն հասնում են տասնութերորդ դարի վերջ-տասնիններորդ դար՝ դպրոցներից հեռու բնակվող աշակերտների համար նամակագրության միջոցով ԱՄՆ-ում ու Եվրոպայում կազմակերպվող դասընթացներին¹⁵: Սակայն հեռավար ձևաչափի նկատմամբ իրական հետաքրքրությունը սկսվեց 1970-ականների վերջից¹⁶: Տեխնոլոգիական զարգացմանը զուգահեռ կրթության հեռավար կազմակերպման հնարավորություններն էլ ընդլայնվեցին: Փոստով ուղարկվող հանձնարարություններին փոխարինելու եկան ատլիո- և վիդեո-

¹³ **Reimers M. F.**, Educacion y COVID-19: Recuperarse de la pandemia y reconstruir mejor, p. 8. http://www.ibe.unesco.org/sites/default/files/resources/34_educacion_y_covid-19_spa.pdf (մուտքի ամսաթիվ՝ 18.02.2022):

¹⁴ COVID-19 Education Response Webinar Skills development during the COVID-19 pandemic and preparing for recovery, synthesis report <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000373451/PDF/373451eng.pdf.multi> (մուտքի ամսաթիվ՝ 20.03.2022):

¹⁵ **Georgalas P.**, E-Learning Turkish Language and Grammar: Analyzing Learners' Behavior, Turkish Online Journal of Distance Education-TOJDE, 13 (1), pp. 87-99 <https://dergipark.org.tr/tr/download/article-file/155887> (մուտքի ամսաթիվ՝ 27.02.2022):

¹⁶ **McIsaac M. S., Gunawardena Ch. N.**, Distance Education, <http://members.aect.org/edtech/ed1/pdf/13.pdf> մուտքի ամսաթիվ՝ 09.01.2022):

դասերը, կրթական ռադիո- և հեռուստահաղորդումները, ապա հեռուստակոնֆերանսները, ուսուցողական վեբինարները և նույնիսկ բացառապես օնլայն տիրույթում գործող կրթական կազմակերպությունները¹⁷: Այսինքն՝ կորոնավիրուսի համավարակի բռնկումից առաջ էլ տարբեր երկրներում գործում էին լեզուների, համակարգչային տեխնոլոգիաների ուսուցման առցանց կենտրոններ, հեռավար կրթություն առաջարկող վիրտուալ դպրոցներ և նույնիսկ համալսարաններ: Բազմաթիվ ուսումնական հաստատություններում պանդեմիայից առաջ էլ ներդրված էին ուսանող-դասախոս կապը հեշտացնող էլեկտրոնային հարթակներ, առաջարկվում էին տարատեսակ օնլայն դասընթացներ և ամբողջական կրթական ծրագրեր: Հեռավար կրթության կազմակերպման ձևերի և գործիքների այս բազմազանությունն ու դրանց կիրառման արդյունավետությունը արդեն համարյա երեսուն տարի է կրթության տեսաբանների ուշադրության ծիրում են: Ընդ որում, «հեռավար կրթություն» եզրույթի վերջնական սահմանման, դրա տարատեսակների դասակարգման խնդիրների շուրջ գիտական վեճերն ու քննարկումները այսօր էլ շարունակվում են¹⁸: Այս ուսումնասիրության շրջանակներում մենք հեռավար կրթությունը սահմանելիս կառաջնորդվենք Համաշխարհային բանկի կողմից առաջարկվող առավել ընդհանրական բնորոշմամբ, որի համաձայն հեռավար կրթությունը դասավանդման և ուսուցման այնպիսի մոդել է, որի դեպքում ուսուցումը տեղի է ունենում դասավանդումից տարբերվող վայրում¹⁹: Արժի շեշտել նաև, որ մանավանդ կորոնավիրուսի համավարակի համատեքստում հեռավար կրթության կազմակերպման փորձը ներկա-

¹⁷ Sügümlü, Ü-, A case study on teaching Turkish through distance education. International Journal of Psychology and Educational Studies, 8(1), 2021, pp. 174-190. <https://files.eric.ed.gov/fulltext/EJ1286466.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 24.02.2022):

¹⁸ McIsaac M. S., Gunawardena Ch. N., Distance Education.

¹⁹ Keegan D., The future of learning: From elearning to mlearning, ZIFF Papiere 119 FernUniversität Hagen, 2002, p. 19.

յացնող գիտական հոդվածներում հեռավար կրթություն եզրույթին գուգահեռ հաճախ օգտագործվում են նաև վիրտուալ կրթություն, օնլայն կրթություն, էլեկտրոնային կրթություն եզրույթները, որոնք որոշ վերապահումներով հնարավոր է կիրառել որպես հոմանիշներ²⁰: Ուսանող-դասախոս կապի համատեքստում ընդունված է առանձնացնել հեռավար կրթության համաժամանակյա և տարաժամանակյա տեսակները: Եթե առաջին դեպքում ուսանողներն ու դասախոսները մույն ժամին մտնում են թվային միջավայր և դառնում դասի ակտիվ մասնակիցներ, ապա երկրորդ դեպքում ուսանողներն ու դասախոսները թվային հարթակ համաժամանակյա մոտք չեն գործում²¹: Դասավանդումը այս պարագայում կազմակերպվում է տեսաձայնագրությունների և այլ նյութերի միջոցով, իսկ հետադարձ կապն ապահովելու համար օգտագործվում են էլեկտրոնային նամակները, մեկնաբանությունները և այլն²²: Համավարակի տարածումից տարիներ առաջ էլ կրթական ծրագրերում հեռավար կոմպոնենտի ներառման կողմնակիցները դրա հիմնական առավելությունների շարքում նշում էին հնարավոր տրանսպորտային ու կեցության ծախսերի կրճատումը, ժամանակի խնայումն ու դասացուցակի ճկունությունը: Մյուս կողմից հեռավար ուսուցման բացասական կողմերի շարքում առանձնացվում էին ուսանող-դասախոս, ինչպես նաև ուսանող-ուսանող

²⁰ **Bozkurt, A., & Sharma, R. C.**, Emergency remote teaching in a time of global crisis due to CoronaVirus pandemic. Asian Journal of Distance Education, 15(1), 2020, i-vi, http://sli.bnu.edu.cn/uploads/soft/201216/2_1753415031.pdf (մուտքի ամսաթիվ՝ 11.02.2021):

²¹ **Civelek M., Toplub I., Uzun L.**, Turkish EFL teachers' attitudes towards online instruction throughout the Covid-19 outbreak, English Language Teaching Educational Journal, Vol. 4, No. 2, 2021, pp. 87-98 <http://journal2.uad.ac.id/index.php/eltej/article/view/3964/pdf> (մուտքի ամսաթիվ՝ 14.02.2022):

²² Նույն տեղում: Այս մասին տե՛ս նաև **Aydin E., Erol S.**, The Views of Turkish Language Teachers on Distance Education and Digital Literacy during Covid-19 Pandemic, International Journal of Education & Literacy Studies, pp. 60-71 <https://www.journals.aiac.org.au/index.php/IJELS/article/view/6476/4526> (մուտքի ամսաթիվ՝ 01.02.2022):

շփումների պակասը և որպես հետևանք դասին ներգրավվածության ու ակտիվության ցածր մակարդակը, մեծ ծավալով նյութերը օնլայն ներկայացնելու բարդությունները, ժամանակային սահմանափակումները, տեխնիկայի բացակայությունը կամ տեխնիկական հմտությունների պակասը²³: Այս քննարկումների համատեքստում մի շարք ուսումնասիրողներ էլ առաջ քաշեցին համակցված կամ խառը ուսուցանման մոդելը, որը պետք է համատեղեր ավանդական լսարանային մեթոդների և թվային/վիրտուալ մեթոդների դրական կողմերը, նպաստեր տեխնիկական միջոցների առավել լայն կիրառմանը²⁴: Լեզուների ուսուցման ոլորտում, օրինակ, այս մոտեցման կողմնակիցները նշում են, որ մեր օրերի անբաժան մասը հանդիսացող սմարթ հեռախոսների և համակարգիչների համար նախատեսված տարբեր հավելվածները, խաղերը, ենթագրերը արդյունավետ են բառերը հիշելու, կրկնելու, իմացածն ամրապնդելու տեսանկյունից: Խոսքի հմտություններն ու ճիշտ արտասանության զարգացման տեսանկյունից անփոխարինելի են այնպիսի գործիքներ, ինչպես, օրինակ, տե-

²³ **Afshari M., Banu Kenayathulla H., Idris A. R., Ibrahim M. S., Abdul Razak A. Z.,** Factors Affecting The Effective Implementation of E-Learning in Educational Institutions, pp. 111-119 <https://www.tojsat.net/journals/tojsat/articles/v03i03/v03i03-13.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 19.02.2021), այս մասին տե՛ս նաև **Arkorful V., Abaidoo N.,** The Role of E-Learning, the Advantages and Disadvantages of Its Adoption in Higher Education. International Journal of Education and Research, Vol. 2, No. 12, 2014, pp. 397-410 <https://www.ijern.com/journal/2014/December-2014/34.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 15.01.2021), այս մասին մանրամասն տե՛ս նաև **Sadeghi M.,** A Shift from Classroom to Distance Learning: Advantages and Limitations, International Journal of Research in English Education, 2019, pp. 80-88, <http://ijreeonline.com/article-1-132-en.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 19.03.2022):

²⁴ **Graham Ch. R.,** Blended Learning Systems: Definition, Current Trends, And Future Directions http://curtbonk.com/graham_intro.pdf (մուտքի ամսաթիվ՝ 01.02.2022), այս մասին տե՛ս նաև **Güntaş S., Güneyli A., Gökbulut B.,** Evaluation of E-learning and Self-Efficacy Levels of Turkish Teacher Candidates in Turkish Education as a Foreign Language Course Based on Blended Learning, Revista Argentina de Clínica Psicológica, Vol. XXIX, N°5, 2020, pp. 834-847 <https://www.revistaclinicapsicologica.com/data-cms/articles/20201121102942amSS-C-333.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 07.02.2021):

սագրություններն ու փոքրասերը: Ավելին, նույնիսկ կարդալու և գրելու հմտությունները զարգացնելու համար նոր տեխնոլոգիաները հեշտ և հետաքրքիր տարբերակներ են առաջարկում:²⁵ Այս նոր մեթոդները տրամաբանորեն պետք է որ մատուցվող նյութն ավելի ընկալելի դարձնեն նոր սերնդի ուսանողներին, ում Games2train հիմնադիր-տնօրեն, ամերիկացի գրող Մարք Փրենս-քին կոչում է «թվային աշխարհի բնիկներ» (digital natives)²⁶, իսկ

²⁵ Թուրքերենի դասավանդման առցանց մեթոդների առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս **Halitoğlu V.**, Use of the Web Adventure Method in Teaching Turkish as a Foreign Language (Example of A2 Level), International Journal of Progressive Education, Vol. 17, N 6, 2021, pp. 270-288 https://ijpe.inased.org/makale_indir/2673 (մուտքի ամսաթիվ՝ 07.01.2022), այս մասին տե՛ս նաև **Georgalas P.**, E-Learning Turkish Language And Grammar: Analyzing Learners' Behavior <https://dergipark.org.tr/tr/download/article-file/155887> (մուտքի ամսաթիվ՝ 04.03.2022), տե՛ս նաև **Bal. M., Udül. F.**, Examining the Turkish language curriculum in terms of e-learning, m-learning, and u-learning. Novitas-ROYAL (Research on Youth and Language), 15(2), 2021, pp. 52-65. <https://novitasroyal.org/wp-content/uploads/2021/10/4-Bal-Ud%C3%BCI-52-65.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 14.03.2022), տե՛ս նաև **Solak E., Cakir R.**, Language learning strategies of language e-learners in Turkey, E-Learning and Digital Media 2015, Vol. 12(1), pp. 107–120 <https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/2042-753014558384> (մուտքի ամսաթիվ՝ 11.03.2022):

Արժի նշել, որ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոսներն էլ արդեն տարիներ շարունակ ուսանողներին նոր տեքստային և լուրսկան նյութեր տրամադրելու, դասի ինտերակտիվությունն ապահովելու համար օգտվում են տարատեսակ առկա ռեսուրսներից, որոնց մեծ մասը ռուսերեն կամ անգլերեն է: Դրանցից առանձնացնենք <http://www.de-fa.ru/turkish.htm> առցանց դպրոցը (մուտքի ամսաթիվ՝ 14.03.2022), <http://www.turkiyem.ru> կայքը, ռուսաստանյան Dialog լեզվական դպրոցի սոցիալական օգտահաշիվները, Dillendim յուրուրյան ալիքը և այլն: Հայերենով ռեսուրսների շարքում առանձնացնենք Instagram հարթակում գործող Karmiryan Turkish Club էջը: Թուրքերենը զարգացնող ամենահայտնի հիմն հավելվածներին կարելի մանրամասնորեն ծանոթանալ <https://www.fortravelovers.com/en/top-5-of-the-best-turkish-language-learning-apps> էջում (մուտքի ամսաթիվ՝ 17.01.2022):

²⁶ **Prensky M.**, Digital Natives, Digital Immigrants, 2001, <https://www.marcprensky.com/writing/Prensky%20-%20Digital%20Natives,%20Digital%20Immigrants%20-%20Part1.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 14.03.2022): Իր այս աշխատության մեջ Մարք Փրենսքին զուգահեռ է տանում արտասահման մեկնող միգրանտների և հասուն տարիքում թվային տեխնոլոգիաների հետ ծանոթացող մարդկանց միջև և շեշտում, որ չափաիսա մարդիկ այս դեպքում նման են միգրանտների, այս կամ այն չափով սովորում են նոր լեզուն, նոր մշակույթը, բայց միշտ պահպանում են անցյալի հետ կապն ու իրենց միգրանտական ակցենտը: Փրենսքին օնլայն

մեկ այլ գրող Դոն Թեփսքոթը՝ «ցանցային սերունդ» (net generation²⁷):

Կրթության մաքսիմալ թվայնացման վերաբերյալ մեծաքանակ նյութերի առկայությանը հակառակ մինչքովիդյան ժամանակաշրջանում կրթական առցանց համակարգերի նորարարականությունը և որպես հետևանք թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների կողմից որոշակի նոր հմտությունների յուրացում պահանջելը, համալսարանական ամբիոններում տեխնիկական հազեցվածության պակասը ու թերևս օգտագործման անխոստափելի անհրաժեշտություն չլինելը շատ հաճախ ուղղակիորեն արգելակում էին այս տեխնոլոգիաների իրական կիրառումը ուսումնական գործընթացում: Համալսարանը դարձավ այն բեկումնային կետը, որում պարտադրված եղանք հարմարվել նոր իրողություններին և սկսել ակտիվորեն կիրառել առցանց ուսուցման ամենատարբեր գործիքներ: Սրա հետ մեկտեղ առավել ցցուն դարձան թե՛ առկա խնդիրները, և թե՛ հեռավար կրթության առաջարկած առավելությունները:

սիրություն միգրանտական ակցենտի դրսևորում է համարում տեղեկատվություն ստանալու համար նախ գրքի, ապա միայն ինտերնետի օգնությամբ դիմելը կամ որևէ ծրագրի օգտագործման ուղեցույցը կարդալը: Ի տարբերություն թվային միգրանտների՝ նրանց երեխաներն արդեն աղապատացված են նոր միջավայրում, դրա համար էլ ստանում են վիրտուալ բնիկ արտահայտությունը: Այս նոր սերունդը մանկությունից սովոր է ինֆորմացիայի մեծ ծավալին և ընկալում է այն շատ ավելի արագ, սակայն ունակ չէ երկար հանձնարարություններ կատարել, արագ է հոգնում: Այս խնդրի հանգամանակից վերլուծումից հետո Մ. Փրենսփին եզրակացնում է, որ ինչպես միգրանտ ծնողները չեն կարող արգելափակել իրենց երեխաների սոցիալիզացման այս կամ այն մշակություն, այնպես էլ ուսուցիչները չեն կարող համոզել նոր սերնդին սովորել հին մեթոդներով, ուստի մեթոդաբանության և բովանդակության փոփոխության կարիք կա:

²⁷ **Tapscott D.**, Grown Up Digital: How the Net Generation is Changing Your World, 2009 [http://socium.ge/downloads/komunikacisteoria/eng/Grown_Up_Digital_How_the_Net_Generation_Is_Changing_Your_World_\(Don_Tapscott\).pdf](http://socium.ge/downloads/komunikacisteoria/eng/Grown_Up_Digital_How_the_Net_Generation_Is_Changing_Your_World_(Don_Tapscott).pdf): Ավելի վաղ՝ 1990-ականների վերջին, Դոն Թեփսքոթն հանդես էր եկել «Մեծանալ թվային միջավայրում. ինչպես է ցանցային սերունդը փոխում քո աշխարհը» բեաքսեղեր դարձած գրքով: 2009 թ. հրատարակության մեջ հեղինակը խոսում է արդեն չափահաս դարձած ցանցային սերնդի խնդիրների ու նրանց առաջ կանգնած ընտրությունների մասին:

ՀԵՌԱՎԱՐ ՌԻՍՈՒՑՄԱՆ «ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ»

2020 թ. մարտ ամսից առցանց ուսուցման անցած միլիոնավոր աշակերտների, ուսանողների և դասավանդողների փորձառության գնահատումը, վերլուծությունն ու քննությունը կարևոր է թե՛ պանդեմիայի շարունակականության, թե՛ աշխարհում բվայնացման աննախադեպ մեծ տեմպերի համատեքստում: Ուշագրավ է, որ համավարակի ընթացքում կազմակերպված հեռավար դասերի առավելությունները և թերությունները գնահատելիս տարբեր երկրների փորձը հետազոտող մասնագետներ գրեթե համակարծիք են լինում: Դրական կողմերի շարքում առաջին հերթին խոսվում է ճկունության և կրթության շարունակականությունն ապահովելու հնարավորության մասին: Բացասական կողմերի շարքում առաջին տեղում, որքան էլ տարօրինակ հնչի, ոչ բավարար տեխնիկական հնարավորություններն (համակարգչի բացակայություն, թույլ ինտերնետ) ու դասախոսների և ուսանողների մոտ տեխնոլոգիական հմտությունների պակասն են²⁸: Սրան գումարվում է նաև համակարգչի առաջ երկար նստելու հետ կապված առողջական խնդիրները, շփման պակասից առաջ եկող հոգեբանական ճնշվածությունը, իսկ ուսանողների պարագայում նաև ինքնամոտիվացման, ինքնավերահսկման պակասը²⁹:

²⁸ **Civelek M., Toplub I., Uzun L.**, Turkish EFL teachers' attitudes towards online instruction throughout the Covid-19 outbreak...

²⁹ Կորոնավիրուսի համավարակի ընթացքում տարբեր համալսարանների փորձառության մասին մանրամասն տե՛ս **W. Bao**, COVID-19 and online teaching in higher education: A case study of Peking University <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7262082/>, (մուտքի ամսաթիվ՝ 15.03.2022), նաև Attitudes and Challenges Towards Virtual Classes in Learning English Language Courses From Students' Perspectives at Taibah University During COVID-19 Pandemic, Journal of Language Teaching and Research, Vol. 12, N 3, pp. 419-428, 2021, <https://jltr.academypublication.com/index.php/jltr/article/view/890/661>, (մուտքի ամսաթիվ՝ 01.03.2022), նաև **Murugamani C., Ansuman S., Anupam M., Zachariah N. S., Kumar P.**, Importance Of Online Education During Covid-19 Pandemic, Turkish Online Journal of Qualitative Inquiry (TOJQI), Vol. 12, N 7, 2021, pp. 6293-

Դժվար չէ կռահել, որ այս և նմանատիպ խնդիրների տեղայնացված տարբերակների հետ բախվեցինք նաև Երևանի պետական համալսարանում առցանց դասընթացներ կազմակերպելիս: Դասերն ամբողջապես հեռավար կազմակերպելու մասին ԵՊՀ ռեկտորատի որոշումը հրապարակվեց 2020 թ. մարտի 16-ին³⁰: Դասապրոցեսի այս ձևաչափը պահպանվեց 2019-2020 ուստարվա ողջ գարնանային կիսամյակում, ներառյալ բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության կազմակերպումը: 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակը սկսվեց հիբրիդային ռեժիմով, սակայն արդեն հոկտեմբերի 7-ից կորոնավիրուսային իրավիճակի սրման հետևանքով կրկին անցում կատարվեց առցանց ձևաչափին³¹:

2019-2020 ուստարվա գարնանային կիսամյակում հաշվի առնելով հեռավար դասավանդման անցնելու հրատապությունը և նախապատրաստությունների իրականացման անհնարինությունը՝ դասընթացի անցկացման հարթակի (Zoom, Google Classroom, Big blue button և այլ հավելվածներ) ընտրությունը թողնվեց դասախոսի հայեցողությանը: Այս փուլում թյուրբազիսության ամբիոնի երկրորդ և երրորդ կուրսերի համար թուրքերենի դասավանդումը կազմակերպվեց Google Classroom և Zoom հարթակների համատեղ կիրառմամբ: Նյութերն ու հանձնարարությունները ուսանողներն ամենօրյա ռեժիմով ստանում և անհատապես վերադարձնում էին դասախոսին Google Classroom-ով, իսկ Zoom-ով անցկացվող դասերի ընթացքում քննարկվում էին նոր քերականական թեմաները, ուսանողները կարողանում էին ճշգրտել

6299, <https://www.tojqi.net/index.php/journal/article/view/4833/3391> (մուտքի ամսաթիվ՝ 18.03.2022):

³⁰ Երևանի պետական համալսարանն անցնում է հեռավար ուսուցման, <http://ysu.am/psy/hy/Distance-learning-at-YSU-1585647853> (մուտքի ամսաթիվ՝ 15.06.2021):

³¹ ԵՊՀ-ում երկու շաբաթով կդադարեցվեն այն դասընթացները, որոնք հնարավոր չէ իրականացնել հեռավար, <http://www.ysu.am/news/hy/YSU-statement-06-10-2020> (մուտքի ամսաթիվ՝ 15.06.2021):

իրենց համար անհասկանալի հարցերը: Երկու հարթակի համատեղ կիրառությունը հնարավորություն ստեղծեց մի կողմից չթուլացնել ուսանող-դասախոս կապը, ստեղծել կենդանի շփման որոշակի իմիտացիա, մյուս կողմից ուսանողներին առաջարկել լեզվական բոլոր չորս հմտությունները զարգացնող նյութեր և հանձնարարություններ: Մասնավորապես, գրավոր թարգմանություններին ու քերականական վարժություններին զուգահեռ լսողական, խոսակցական, ինչպես նաև ստեղծագործական հմտությունները լավացնելու համար հանձնարարվում էր կարճամետրաժ ֆիլմերի, հոլովակների դիտում, ապա կազմակերպվում դրանց բանավոր քննարկում և տպավորությունների գրավոր ներկայացում: Բացի լեզվական հմտությունների զարգացումից, հանձնարարությունների դիվերսիֆիկացիան օգնում էր ապահովել ուսանողների հետաքրքրությունը դասի նկատմամբ համատարած ապատիայի պայմաններում (Նկար 1)³²: Այս առումով ուշագրավ է, որ հենց այս փուլում Հայոց ցեղասպանության տարելիցին ընդառաջ թյուրքագիտության ամբիոնի երկրորդ կուրսի ուսանողների նախաձեռնությամբ ֆեյսբուքում կազմակերպվեց հայերեն բանաստեղծությունների թուրքերեն թարգմանությունների յուրահատուկ ֆլեշմոբ:

³² Այստեղ արժի նշել, որ չնայած վերջին տարիներին համաշխարհային պրակտիկայում լեզու սովորելիս թարգմանությունների դերը շարունակաբար նվազում է՝ իր տեղը զիջելով հաղորդակցական հանձնարարություններին, հայկական իրականության մեջ թուրքագետ- մասնագետների համար առաջնային է մնում թուրքերենից հայերեն և հայերենից թուրքերեն գրավոր/բանավոր թարգմանությունների կատարումը: Լեզվի ուսուցանման գործում թարգմանության նկատմամբ առկա մոտեցումների համար մանրամասն տե՛ս, օրինակ, **Sierra F. C.**, Foreign Language Teaching Methods: Some Issues and New Moves, <https://core.ac.uk/download/pdf/58902167.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 5.09.2021), տե՛ս նաև **Richards J. C., Rodgers T. S.**, Approaches and Methods in Language Teaching. A Description and Analysis, Cambridge University Press, 1999:

Ձեր կարծիքով առցանց հասննարարություններից ո՞րն էր առավել արդյունավետ:




Նկար 1. Առցանց դասերի ընթացքում կիրառված հանձնարարությունների արդյունավետության գնահատում

2020-2021 ուսումնական տարում առցանց դասընթացներն արդեն իրականացվել են բացառապես ԵՊՀ Moodle հարթակի միջոցով, որը համապատասխան գործիքակազմին տիրապետելու պարագայում առաջարկում է ստեղծարար մոտեցումների կիրառման շատ լայն հնարավորություններ և առավել վերահսկելի դարձնում դասի իրականացման գործընթացը: Սրա հետ մեկտեղ սակայն Moodle հարթակը բավական բարդ է օգտագործման տեսանկյունից, ինչը հաճախ թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների համար առաջացնում էր տեխնիկական բնույթի խնդիրներ, որոնք անխուսափելիորեն ազդում էին դասապրոցեսի որակի վրա: Թերևս ավելորդ է նշել, որ 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի մասին խոսելիս պետք է հաշվի առնել, որ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմը, 44-օրյա ավերիչ ռազմական գործողությունները և նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը մեծապես ազդեցին ուսանողների հոգեբանական վիճակի, սովորելու ցանկության վրա:

Վերոնշյալ երկու կիսամյակների ընթացքում թուրքերենի առցանց դասընթացի արդյունքներն ամփոփելու, դրական ձեռքբերումները գնահատելու, առկա խնդիրներն հասկանալու և շտկելու նպատակով ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ուսա-

նողների շրջանակներում Google Forms գործիքի կիրառմամբ իրականացրել ենք թուրքերենի առցանց դասավանդման որակի մասին անանուն հարցում: Հարցմանը մասնակցել է 40 ուսանող, որոնցից 15-ը թուրքերեն առցանց դասընթացին մասնակցել են 2019-2020 թթ. երկրորդ կիսամյակում, 25-ը՝ 2020-2021 թթ. առաջին կիսամյակում: Հարցման մեջ ընդգրկված են ինչպես թյուրքագիտության ամբիոնի, այնպես էլ թուրքերենը որպես երկրորդ օտար լեզու սովորող իրանագիտության և արաբագիտության ամբիոնների ուսանողներ: Հարցվածների մեծ մասը համավարակից առաջ հեռավար դաընթացների մասնակցության փորձ չի ունեցել (Նկար 2):


COVID-19 համավարակի տարածումից առաջ առցանց դասընթացի մասնակցության փորձ ունե՞լիք:



Նկար 2. Համավարակից առաջ հեռավար դասընթացի իրականացման փորձ

Դասընթացի արդյունավետությունը ուսանողների մեծամասնությունը գնահատել է «գերազանց» կամ «լավ» (Նկար 3):


1-5 միավորանոց սանդղակով գնահատե՞ք առցանց ծնաչափով թույլեցրե՞նի դասավանդման արդյունավետությունը:



Նկար 3. Թուրքերենի առցանց դասընթացի ընդհանուր գնահատականը


Ուսանողները մեծամասամբ գոի են եղել մաս տրամադրված նյութերից (Նկար 4) և տնային հանձնարարությունների ստուգման որակից (Նկար 5):

Արդյո՞ք բավարար էր առցանց դասընթացի ժամանակ ձեզ տրամադրված նյութերի քանակը:



Նկար 4. Դասընթացի ժամանակ տրամադրված նյութերի գնահատում

Ինչպե՞ս կգնահատեք տնայինների առցանց ստուգման որակը:



Նկար 5. Հանձնարարությունների ստուգման որակի գնահատում

Անդրադառնալով դասընթացների ժամանակ օգտագործված հավելվածներին՝ հարցված ուսանողների 30%-ը Google Classroom գործիքով աշխատանքը գնահատել է «գերազանց», 22,5%-ը՝ «լավ», Moodle հարթակի պարագայում «գերազանց» գնահատել է 12,5%-ը, իսկ «լավ»՝ 25%-ը, ևս 15% այն համարել է «բավարար»: Zoom հարթակով աշխատանքը «գերազանց» են գնահատել հարցված ուսանողների 40%-ը, «լավ»՝ 35%-ը: Համապատասխանաբար մեկ ուսանող լիովին անարդյունավետ է համարել Google Classroom հարթակը և 3-ը Moodle հարթակը: Օգտագործված հարթակների դրական և բացասական կողմերի մասին հարցերին պատասխանելիս Google Classroom-ի դեպքում ուսանողները որպես առավելություն առանձնացրել են հարթակի օգտագործման մատչելիությունը, նյութերի մշտապես հասանելի լինելը և հատկապես ամեն օրվա հանձնարարությունների անհատական ստուգումը (Նկար 6):

Ձեր կարծիքով ո՞րոնք էին Google classrom հարթակի կիրառման դրական և բացասական կողմերը:

Դրական...zoom հարթակի դասերը ճշգրիտ ժամանակին դրվում էին:

Կարող եմ նշել դրականը, հարմար է աշխատելու համար, ժամանակը արդյունավետ է օգտագործվում, հետո տեսնում ես արածդ սխալները գրավոր կերպով

դրական կողմ՝ հարթակի կիրառման մատչելիություն բացասական կողմ՝ տեսազանգի բացակայություն

Դրական կողմը այն էր, որ տեսլին աշխատանքի մասին չէի մոռանում, ուղարկված գրականությունն էլ մտում էր ինձ մոտ, բացասական կողմ որպես այդպիսին չկար:

Անհրաժեշտության դեպքում կարող եմ մտնել և գտնել վարժությունները, նայել սխալներս...սկզբնական շրջանում ինձ համար ժամանակատար էր էլեկտրոնային ձևաչափով աշխատանք պատրաստելը

Ամենադրական կողմը կնշեմ ծրագրի արդյունավետ կիրառման համար ունեցած բոլոր հնարավորությունները:

Ամենադրականը հանձնարարությունների անհատական ստուգումը, և հնարավորությունը նախապես տեսնելու՝ ինչ հանձնարարություն կա և որքան է ժամկետը: Բացասական որևէ կողմի հետ չեմ առնչվել:

Նկար 6. Արձագանքներ Google Classroom հարթակի մասին

Moodle հարթակի դրական կողմերի շարքում ուսանողները ևս նշել են նյութերի հասանելիությունը, անհատական հանձնարարությունների առկայությունը (Նկար 7):

Ձեր կարծիքով ո՞րոնք էին Moodle հարթակի կիրառման դրական և բացասական կողմերը:

Ծրագիրը ոչ միշտ էր նորմալ աշխատում

Դրական կիմներ, երբ այդտեղ ունենայինք թեմաները, հստակ ցանկացած դասի մասին տեղեկություններ ստանայինք:

Դրականն այն է, որ հարմար է աշխատելու համար

չեմ կիրառել

Դրական կողմ չունի , շատ վատ է աշխատում

Դուներ պատշաճ մակարդակի ծրագրային մշակում, աշխատում էր թերություններով

Ամենադրական կողմը դաս անցկացնելու մատչելիությունն էր, ամենաբացասականը՝ տեխնիկական որոշ խնդիրները, մասնավորապես դասդադրությունն ու երբեմբ ծրագրի չբացեցը:

ամենաբացասականը -երբեմն չի բացում :

Նկար 7. Արձագանքներ Moodle հարթակի մասին

Zoom հարթակի դրական կողմերի շարքում առանձնացվել են կենդանի շփումը, վիրտուալ գրատախտակի առկայությունը, էկրանը կիսելու հնարավորությունը, որոնք դասերը դարձնում են ավելի դինամիկ և հեշտացնում մատուցվող նյութի ներկայացումը (Նկար 8):

Ձեր կարծիքով ո՞րոնք էին Zoom հարթակի կիրառման դրական և բացասական կողմերը:

Դրական կողմը համակարգչի էկրանը բացելու հնարավորությունն էր, որը թույլ էր տալիս տեսնել և ավելի հեշտ ընկալել կյուքը, բացասական չկա:

Դրականն այն է, որ դասընթացի շրջանակներում որևէ տեսանյութ, կյուք կամ նկար ցուցադրելիս ավելի դյուրին եղանակով է կատարվում դա: Բացասական կողմերից է՝ դասախոս ուսանող շփման պակասը:

Բացասական կողմ՝ սահմանափակ ժամանակ, դրական կողմ՝ տեսազանգի առկայություն

Դրական՝ օգտագործման առումով հեշտ հարթակ է, բացասական՝ դասեր կան ,որոնք 40րոպե հետո անջատվում էին

Դասի տեսանյութագրությունը ունենալու և հետագայում լսելու հնարավորություն... գրատախտակի բացակայությունը օտար լեզվի ուսումնասիրության ժամանակ

Առհասարակ, առցանց դասավանդումը հոգևեցնող էր երկար համակարգչի դիմաց նստելու, առումով, սակայն բուն դասավանդման գործընթացը հիմնալի էր

Ամենադրական կողմը ծրագրի բավականին հեշտ և որակով կիրառությունն էր, ամենավատը՝ հազվադեպ առաջացած մանր տեխնիկական խնդիրները(ծայնի կործել, անջատվելը):


Նկար 8. Արշագանքներ Zoom հարթակի մասին

Ինչպես երևում է նկարներից, հավելվածից անկախ առցանց դասերի դրական կողմերից են մաս ճամնապարհի վրա ծախսվող ժամանակի և գումարի խնայումը հատկապես մարզից եկող ուսանողների պարագայում, ինչպես մաս կորոնավիրուսի պայմաններում անգամ դասապրոցեսի գրեթե անխափան ապահովումը: Ինչ վերաբերում է առցանց դասընթացների բացասական կողմերին, ուսանողներն առավելապես կենտրոնացել են տեխնիկական, ոչ բովանդակային խնդիրների վրա³³: Zoom հարթակի պարագայում

³³ Նշենք, որ Հայաստանում ըստ վիճակագրական տվյալների 2018թ. դրությամբ համացանցից օգտվող բաժանորդների քանակը կազմել է բնակչության 98%-ը: Բջջային հեռախոսների բաժանորդագրության քանակով (100 հոգու հաշվով) Հայաստանը 62-րդն էր 141 երկրների ցանկում, ֆիքսված ինտերնետ ծառայության քանակով (100 հոգու հաշվով) 71-րդը, իսկ օպտիկական մալուխի միջոցով ինտերնետ ծառայության քանակով (100 հոգու հաշվով)՝ 40-րդ հորիզոնականը 141 երկրների ցանկում: Թվային տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների ցուցանիշով Հայաստանը 4,5 միավորով (առավելագույնը՝ 7) զբաղեցնում էր 50-րդ հորիզոնականը 141 երկրների ցանկում: Վիճակագրական տվյալները մանրամասն տես **Ավետիսյան Ա.**, Մարտա-

դա «կողքից հաճախ լավող աղմուկն» է, «մասնակիցների մեծ քվի պարագայում կապի վատացումը», չլիցենզավորված Zoom-ի դեպքում դասի սկզբից քառասուն րոպե անց անջատվելը: Ինչ վերաբերում է ԵՊՀ Moodle հարթակին, ապա այստեղ էլ են նշվում մուտք գործելու բարդությունը, համակարգի «կախելը»: Բացասական գնահատականներից արժի առանձնացնել մասն առցանց դասերի՝ առողջության տեսանկյունից ոչ շատ օգտակար լինելը, նույն տանն ապրող մի քանի ուսանողի կամ աշակերտի միաժամանակ դաս անելու ընթացքում կապի վատթարացումը, տնային հանձնարարություններն առցանց մուտքագրելու համար տեխնիկական պատրաստվածության պակասը: Այս համա- տեքստում պետք է շեշտենք, որ հարցված ուսանողների 75%-ը դասին մասնակցել է հեռախոսով, ինչը տրամաբանորեն պետք է հանգեցնի որոշակի տեխնիկական խնդիրների, քանի որ տեքստային ֆայլերի հետ աշխատելու տեսանկյունից համա- կարգչի կիրառությունն առավել նպատակահարմար է (Նկար 9):

Ինչ սարքով էիք մասնակցում դասին:




Նկար 9. Հեռավար դասերի ժամանակ օգտագործված սարքավորումները

հրավերներ ու հնարավորություններ, :https://orbeli.am/hy/post/548/2020-08-21/%D5%80%D5%A5%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80+%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4#_ftnre (մուտքի ամսաթիվ՝ 15.08.2021):

Գնահատելով առցանց քննությունների արդյունավետությունը՝ ուսանողների 42,5% նշել է «գերազանց», իսկ 35%-ը՝ «լավ» տարբերակը (Նկար 10): Այս հարցում, սակայն, դասախոսների մոտեցումները թերևս այլ են, քանի որ իրականում քննությունների առցանց իրականացման գոյություն ունեցող գործիքներից և ոչ մեկը բավարար չէր օբյեկտիվ պատկեր ստանալու համար:


1-5 միավորանոց սանդղակով գնահատելիք առցանց քննությունների արդյունավետությունը:



Նկար 10. Առցանց քննությունների արդյունավետության գնահատում

Ընդհանուր առմամբ դրական գնահատականների հետ մեկտեղ հարցվածների մեծ մասը նշել է, որ առկա դասերն ընդհանուր առմամբ ավելի արդյունավետ են (Նկար 11):


Ո՞ր դասերն են առավել արդյունավետ:



Նկար 11. Առցանց և առկա ձևաչափերի արդյունավետության գնահատում

«Կուզեի՞ք համալսարանում թուրքերենի դասընթացը լիովին առցանց լիներ» հարցին հարցված ուսանողների 77,5%-ը բացասական պատասխան են տվել (Նկար 12), սակայն հարցվածների համարյա կեսը կցանկանար, որ համալսարանում գոյություն ունենար դասընթացների հիբրիդային ձևաչափ (Նկար 13):

Կուզեի՞ք համալսարանում թուրքերենի դասընթացը լիովին օնլայն անցնելու մշտական հնարավորություն լիներ:



Նկար 12. Թուրքերենը լիովին առցանց դարձնելու գնահատում

Կուզեի՞ք համալսարանում հնարավորություն ունենալ թուրքերենի դասընթացն անցնել հիբրիդային ձևաչափով:



Նկար 13. Համալսարանում հիբրիդային ձևաչափով թուրքերեն անցնելու հնարավորության գնահատում

Հիբրիդային դասընթացների մասին մեկնաբանության մեջ հարցված ուսանողներից մեկը նշում է.

Շատ եռաթյան, առցանց ուսուցումը ունի շատ առավելություններ՝ մասնավորապես ժամանակի ճիշտ կառավարումը: Այնուամենայնիվ, լեզվի դասավանդման տեսանկյունից՝ կարծում եմ, որ կենդանի շփմանը չեն կարող փոխարինել ոչ մի տեսակի ժամանակակից մեթոդներ: Ուստի լավագույն լուծումը կարող է լինել հիբրիդային դասավանդումը, որի դեպքում հեռավորություն կլինի առցանց դասերի ընթացքում շեշտը դնել լսողական վարժությունների, վիդեոլեզուների դիտման և քննարկման վրա, իսկ առկա դասերը ինքնին կդառնան ինացածը կիրառելու և սովորել լեզվով շփվելու հարթակ:

Մեկ այլ ուսանող էլ այսպես է մեկնաբանում դասապրոցեսի ձևաչափից դրա արդյունավետության կախվածությունը.

Թեև, Օկայն ու Թֆայն ձևաչափով անցկացվող դասերը ունեն առավելություններ ու թերություններ, բայց կարծում եմ, որ եթե սրտանց որևէ առարկա ուզում ես սովորել ինքը քեզ համար, այլ ոչ թե քննությունն ու ստուգաբլիցը ստանալու, ադ դեպքում ոչ մի տարբերություն չի լինի դասը անցկացնելու տարբերակի մեջ:

Պետք է փաստենք նաև, որ հավելյալ մեկնաբանությունների բաժնում որևէ բացասական արձագանք չի գրանցվել, ուսանողները կիսվել են թուրքերենի դասընթացի կազմակերպման որակի մասին դրական կարծիքներով.

Մեր թուրքերենի դասերը անցնում էին բավականին հետաքրքիր և արդյունավետ, դա կապված էր մեր դասախոսի հետ, ով ամեն ինչ անում էր դասը հեռավորի հետ մաղոնի մատուցելու համար:

Օկայն դասերը հեռավորություն են տալիս հետաքրքիր ձևաչափով դաս անցկացնել:

Ընդհանուր առմամբ շատ գոի եմ թուրքերենի առցանց դասընթացների անցկացման որակից:

Օկայն ձևաչափով ունեցել եմք բավականին հագեցած և հետաքրքիր դասեր

Միայն շատ աշխատելու դեպքում թե առկա թե առցանց դասերը լավ արդյունք կտան

Թուրքերենի դասերը ունեցածս ամենահետաքրքիր դասաժամերն էին, ինչի համար շատ շնորհակալ եմ ընկել (Պողոսյանին):

Առկա և հետագա թուրքերենի դասընթացները գրեթե հավասարաչափ արդյունավետությամբ են գործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, 2020 թ. մարտից, կորոնավիրուսային համավարակի տարածմամբ պայմանավորված, դասավանդման հեռավար մոդելին անցումը արևելագիտության ֆակուլտետի դասախոսների համար բազմաթիվ մարտահրավերների, բայց նաև շատ նոր լուծումների ու մոտեցումների ներդրման պատճառ հանդիսացավ: Մասնավորապես, առավել լայն կիրառություն ստացան դասավանդման ինտերակտիվ մեթոդները, սկսեցին օգտագործվել առցանց տիրույթում հասանելի բառապաշարի հարստացման/լտդական հմտությունների զարգացման կայքերի միջոցով տրվող հանձնարարությունները, ավելացավ ուսանողների կողմից իրականացվող ինքնուրույն/ստեղծագործական աշխատանքի ծավալը:

Կարող ենք փաստել, որ թուրքերենի առցանց դասընթացը առկա տեխնիկական խնդիրներին հակառակ կարողացել է ապահովել կրթության շարունակականությունը 2020 թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին: Սրա հետ մեկտեղ՝ ուսանողներից ստացված կարծիքները թույլ են տալիս տեսնել թերություններն ու աշխատել դրանց շտկման ուղղությամբ:

Բովանդակություն

Օտար լեզուների առցանց դասավանդումը COVID-19 համավարակի ընթացքում. ԵՊՀ-ում թուրքերենի դասընթացի օրինակը.....	3
Կրթության կազմակերպումը համավարակի պայմաններում. համաշխարհային փորձի առանձնահատկությունները	8
Հեռավար ուսուցման «Արևելագիտական մեթոդը»	15
Եզրակացություն.....	29

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ՆԱԻՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՌՅԱՆՅ ԴԱՄԱՎԱՆԴՈՒՄԸ
COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ.**

ԵՊՀ-ՈՒՄ ԹՈՒՐԲԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՕՐԻՆԱԿԸ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Հրատ. պատ. խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումճյանի

Ստորագրված է տպագրության՝ 03.02.2023:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 2:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am